



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

“ 27 ” 07 2018թ.  
ք.Երևան

N 563-ՁԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 1012-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2016 թվականի  
նոյեմբերի 23-ի թիվ 1012-Ա հրամանի թիվ 1 և թիվ 2 հավելվածները շարադրել նոր  
խմբագրությամբ, համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

ՆԱԽԱՐԱՐ

“ 27 ” 07 2018թ.  
ք.Երևան

Ա. ՀԱԿՈՐՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ տրանսպորտի, կապի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի

«~~27 հունիսի~~» 2018թ. թիվ ~~563-Վ~~ հրաման

«Հավելված N 1

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի  
23.11.2016թ. թիվ 1012-Ա հրամանի

#### ԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) քաղաքացիների ընդունելության (այսուհետ՝ ընդունելություն) կազմակերպումը:
2. Նախարարությունում ընդունելությունն իրականացնում են նախարարը, նախարարի առաջին տեղակալը, նախարարի տեղակալները և գլխավոր քարտուղարը:
3. Նախարարությունում ընդունելությունը կազմակերպում է նախարարության գործերի կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):
4. Ընդունելություններին հերթագրվելու համար քաղաքացիները նախարարությանը կարող են դիմել նշելով անունը, ազգանունը բնակության հասցեն, հեռախոսահամարը, հարցի էությունը կամ նպատակը:
5. Նախարարի մոտ ընդունելության համար հերթագրվում են այն քաղաքացիները, ովքեր գրավոր դիմել են նախարարությանը, սակայն ներկայացված խնդիրների վերաբերյալ ստացված պատասխանները իրենց կարծիքով բավարար չի եղել, ինչպես նաև ընդունելության են եղել նախարարի առաջին տեղակալի կամ նախարարի տեղակալներից որևէ մեկի (ըստ ոլորտների), կամ գլխավոր քարտուղարի մոտ և այդ ընդունելության արդյունքները չեն բավարարել:
6. Նախարարի մոտ ընդունելության հերթագրմանը չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, ովքեր նույնաբովանդակ հարցով ընդունելության են եղել նախարարի մոտ:
7. Առանձին դեպքերում, հաշվի առնելով բարձրացված հարցի հասարակական հնչեղությունը կամ հրատապ լուծման անհրաժեշտությունը, նախարարի տեղակալներների կամ գլխավոր քարտուղարի առաջարկությամբ նախարարը կարող է հանձնարարել

կազմակերպել՝ արտահերթ ընդունելություն: Արտահերթ ընդունելության դեպքում սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները չեն տարածվում:

8. Նախարարի մոտ ընդունելության հերթագրումը դադարեցվում է յուրաքանչյուր ընդունելությունից 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Նշված ժամկետից հետո ներկայացված հայտերը ներառվում են հաջորդ ընդունելության ցուցակում:
9. Վարչությունն ընդունելությունից 2 (երկու) օր առաջ նախարարին ներկայացնում է հերթագրված քաղաքացիների ցուցակը:
10. Նախարարի մոտ ընդունելությանը կարող են մասնակցել նախարարի տեղակալները, նախարարության գլխավոր քարտուղարը, նախարարության ստորաբաժանումների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք:
11. Նախարարի մոտ ընդունելությունը նախարարի հանձնարարությամբ կարող են իրականացնել նախարարի տեղակալներից որևէ մեկը կամ նախարարության գլխավոր քարտուղարը:



Հավելված N 2  
 ՀՀ տրանսպորտի, կապի և  
 տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի

«27» հուլիս 2018թ. թիվ 563-Ն հրաման

«Հավելված N 2

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի  
 23.11.2016թ. թիվ 1012-Ա հրամանի

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

Պաշտոնը, ոլորտը	Ընդունելության օրը
Նախարար	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ
Նախարարի առաջին տեղակալ (կապի, համացանցի, հեռահաղորդակցության ոլորտ)	Յուրաքանչյուր երեքշաբթի
Նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտ)	Յուրաքանչյուր չորեքշաբթի
Նախարարի տեղակալ (ավտոմոբիլային, երկաթուղային և ջրային տրանսպորտի ոլորտ)	Յուրաքանչյուր հինգշաբթի
Նախարարի տեղակալ (օդային տրանսպորտի, փոստի և քաղաքացիական պաշտպանության ոլորտ)	Յուրաքանչյուր ուրբաթ
Գլխավոր քարտուղար	Յուրաքանչյուր երկուշաբթի